Վեհափառ Հայրապետի մեկնումն Ս. Պետերբուրգ Թագաւոր Կայսրին ներկայանալու համար.

Վեհափառ Հայրապետը նախ քան օծումն, ըստ բարձրագոյն բարեհաճութեան, մայիսի երկրորդ կիսին պէտք է ներկայանար Թագաւոր Կայսրին, ուստի և որոշեց Տեառն յաջողութեամբ մայիսի 12-ին մեկնել Մայր Աթոռից դէպի Ս. Պետերբուրգ։ Նշանակուեցին շքախմբի անդամներ— Սինոդի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոս մագիստրոս, Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոս, Ճեմարանի տեսուչ և հայրապետական դիւանի պետ Տ. Բագրատ վարդապետ և Սինոդի անդամ Տ. Մատթէոս վարդապետ։ Կազմուեց ուղեկարգ և յայտնուեց Կովկասի քաղաքական, ճանապարհային վարչութիւններին ու հայ թեմական առաջնորդներին։

Ըստ ուղեկարգի Նորին Սրբութիւնը մայիսի 12-ին երեկոյեան 6 ժամին դուրս գալով Մայր Աթոռից երկաթուղու գնացքով պէտք է հասնէր Ղարաքիլիսա, այնուհետև խճուղով շարունակելով ճանապարհը՝ պէտք է դիշերէր Քարվանսարայում ու ամսի 13-ին ժամանելով Աղսթափա՝ երկաթուղու ցերեկուայ № 2 արագ գնացքով պէտք է առաջ վարէր ճանապարհը առանց որևէ տեղ կանգ առնելու։

Ճանապարհին Մոսկվայում ընդառաջելով Նորին Սրբութեանը Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը պէտք է ուղեկցէր մինչև Ս. Պետերբուրգ, իսկ վերադարձին պէտք է ընդառաջէին և ուղեկցէին մինչև ս. Էջմիածին, Նորին Սրբութեան Օծմանը մասնակցելու համար Աստրախանի առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսը Արմաւիրից, Շամախու առաջնորդ Տ. Անանիա արքեպիսկոպոսը Բալաջարիից, Թիֆլիզի թեմի կառավարիչ Տ. Եփրեմ եպիսկոպոսը Գանձակ կայարանից։ Երևանի փոխ-թեմակալ Տ. Խորէն եպիսկոպոսը Ղարաքիլիսայից։

Սակայն Վեհի ուղևորութիւնը յետաձգուեց, որովհետև Թագաւոր Կայսրը բարեհաճել էր ընդունելութիւնը նշանակել յունիսի առաջին թուերին Ցարսկոյէ Սելօում։ Ուղեկարգի պարագաները անփոփոխ թողնելով Սրբազնագոյն

Հայրապետը որոշեց մեկնել Մայր Աթոռից սուրբ Կաթուղիկէի տօնը կատարելուց յետոյ հետևեալ օրը մայիսի 28-ին։

Վեհափառ Հայրապետը նախքան մեկնումն հոգալով Մայր Աթոռի վարչական և տնտեսական գործերի մասին տուեց Սինոդի նախագահող Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի հետևեալ կոնդակը։

«ԳԷՈՐԳ ծառայ Յիսուսի Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր եկեղեցւոյ սրբոյ անունով կաթուղիկէ Էջմիածնի

«Գերաշնորհ նախանդամոյ սուրբ Սինոդի Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի՝ հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմք ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ։

«Հանդերձեալ գոլով Տեառն յաջողութեամբ ի 28 ամսոյս ելանել ի Մայր Աթոռոյս ի Պետերբուրգ վասն ներկայանալոյ Նորին Կայսերական Մեծութեան թագաւոր կայսեր, առաջադրեմք Բարձր Սրբազնութեան Ձերում ունել աչալուրջ հսկողութիւն, ի բացակայութեան Մերում, որպէս Տեղապահ Մեր, ի վերայ գործառնութեանց ամենայն պաշտօնէից Մայր Աթոռոյս և առհասարակ ի վերայ տնտեսական կառավարութեան մեծի տանս, նաև ունել խիստ հսկողութիւն ի վերայ կարգապահութեան և ճիշտ կատարման պարտուց մէն մի պաշտօնէի Մայր Աթոռոյս ցվերադարձ Մեր։

«Ողջ լերուք, պահպանեալ և զօրացեալ ի խնամս Հօրն երկնաւորի և օրհնեալ յաւէտ ի Մէնջ։ Ամէն.

ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

24 Մայիսի 1912 ամի
ըստ Տումարիս ՌՅԿԱ.
ի Հայրապետութեան Մերում Ա. ամի
յԱրարատեան Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի
ի Վաղարշապատ, թ. 383։

Մայիսի 28 երեկոյեան ժամերգութիւնից յետոյ Մայր Աթոռիս միաբանութիւնը խմբուեց Վեհարան, իսկ Ճեմարանի և Վաղարշապատի երկու սեռի դպրոցների աշակերտ աշակերտուհիները իրանց ուսուցիչ ուսուցչուհիների հետ Վե-

հարանի դռնից սկսած մինչև զանգակատունը երկկարգ շարուեցին։ Ժողովուրդը խռնուած էր տաճարի բակում։ Վեհ. Հայրապետը ընդունելութեան դահլիճում հրաժեշտի ողջոյն և օրհնութիւն տուեց միաբանութեան և առաջնթացութեամբ արծաթագլուխ մականներ բռնած կարմրազգեստ շաթիրների, Հայրապետական դրօշները կրող վարդապետների և միաբանութեան վայր իջաւ Վեհարանից և ուղղուեց դէպի տաճար. հնչում էին զանգակները. ժողովուրդի բազմութիւնը դգաստ դիրք բռնեց, միաբանութիւնը երկկարգ շարուած աշակերտների միջով Վեհ. Հայրապետին առաջնորդեց դէպի տաճար, ուր Նորին Սրբութիւնը Իջման ս. Սեղանի առաջ ծունկ չոգած աղօթեց լռելեայն, համբուրեց ս. Խաչն ու Աւետարանը և ոտի կանգնելով դարձաւ դէպի դուռը. մինչ այս, Ճեմարանի և դպրոցների աշակերտները երկշարք կանգնել էին զանգակատնից մինչև Տրդատայ դուռը և Հայրապետի տաճարից դուրս գալիս՝ ամբողջ թափորը շարժուեց դէպի հրապարակի կամ հիւսիսային մեծ դուռը,— նախ աշակերտները, յետոյ մականաբարձ շաթիրները, յետոյ միաբանութիւնը, ապա Հայրապետը աջ և ձախ կողմում ունենալով դրօշակիր վարդապետներին և ետևից՝ իւր հետևորդներին։ Ամուսն բազմութիւնը հետևեց թափօրին և կանգ առաւ հրապարակում. Հայրապետը օրհնեց միաբանութեանը, աշակերտներին և խռնուած բազմութեանը. Միաբանութեան անդամները, որոնք պէտք է ուղեկցէին Վեհին, հասարակութեան ներկայացուցիչները և շքախմբի անդամները տեղաւորուեցին իրանց յատկացուած կառքերում. Նորին Սրբութիւնը բազմեց իւր հայրապետական կառքում, տուեց հրաժեշտի ողջոյնն ու օրհնութիւնը, և գնացքը շարժուեց ներկաների բուռն ոգևորութեան բացականչութիւններով։ Առաջևից արշաւում էին վանքի ձիաւորը ճանապարհ բանալու համար, այնուհետև իրար ետևից դաւառապետ պ. Լիմմերմանը, հայրապետական դրօշակիրները, հայրապետի կառքը, որի առաջից և ետևից բազմաթիւ հեծեալներ ոստիկանական ծառայողներից և Վաղարշապատի հասարակութիւնից և ապա բազմաթիւ ուղեկցողների կառքերի շարանը։

Գնացքի մինչև գիւղից դուրս գալը հասարակութիւնը խմբուած ճանապարհի երկու կողմը, անձկութեամբ բարի ճանապարհ էր մաղթում հայրապետին որդիական յարգանքներ մատուցանելով։ Նոյն իսկ դաշտում աշխատող արք և կանայք խմբուած խճուղու մօտ յարգական ողջունով բարի ճանապարհ էին մաղթում։

Հայրապետին ողջունեցին և բարի ճանապարհ մաղթեցին Քեօլանի գիւղի հանդէպ խճուղու մօտ խմբուած մահմեականները խոնարհ գլուխ տալով, իսկ Խաթունարխի առաջ բազմաթիւ հայեր՝ երկար «կեցցէ, ուռռա, բարի ճանապարհ» բացականչելով։

Ժամը 7½ Վեհափառ Հայրապետը հասաւ երկաթուղու էջմիածին կայարանը։ Կայարանապետը կաւքից իջեցնելով Հայրապետին առաջնորդեց դէպի յատկացրած սենեակը։ Ժամանակին հասաւ Երևանից երկաթուղու գնացքը, որին միացած էր Վեհի սալոն վագոնը։ Հայրապետը դուրս եկաւ առանձնարանից ընդհանուր դահլիճը, Վաղարշապատից ուղեկցողներին աջ տուեց, օրհնեց և շնորհակալութիւն յայտնեց. այնուհետև կայարանապետը Նորին Սրբութեանը առաջնորդեց ու տեղաւորեց սալոն վագոնում. Նորին Սրբութեանը բարի երթ մաղթեցին սալոն վագոնում միաբանութիւնից կարգուած յուղարկաւորներն ու գաւառապետը և երկրորդ ազդանշանին համբուրեցին Վեհի աջը ու օրհնութիւնն առնելով դուրս եկան և խռնուած բազմութեան հետ կանգնեցին Հայրապետի վագոնի հանդէպ, տրուեց երրորդ ազդանշանը. յառաջ սուրաց գնացքը, խռնուածների «բարի վերադարձ»բուռն ոգևորութեան բացականչութեամբ։ Հայրապետը վերջին հայրական քաղցր հայեացքն ողջոյնն ու օրհնութիւնը բաշխելով, անցաւ ուղեկից ունենալով «բարի վերադարձի»-ի սրտագին բարեմաղթութիւնները։

Վեհափառ Հայրապետին մինչև էջմիածին կայարանը ուղեկցեցին Մայր Աթոռի միաբանութիւնից Սինոդի նախագահող Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը, Տ. Աշոտ եպիսկոպոսը և Վանական Կառավարութեան նախագահ Տ. Ներսէս վարդապետը. հայրապետական դրօշները կրում էին հիւրընկալ Տ. Սիօն և Վանական Կառավարութեան անդամ Տ. Արիստակէս վարդապետները։

Յ. Ա. Ե.